ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/24

ք. Երևան «24» մարտ 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ն, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 (հինգ)** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է մինչև **2610700** (երկու միլիոն վեց հարյուր տասը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ մինչև 2392000 (երկու միլիոն երեք հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժին՝ մինչև 72700 (յոթանասուներկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ,

3-րդ չափաբաժին՝ մինչև 146000 (մեկ հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած միավոր գների հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

---

[1] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով. բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Գրիգոր Այվազյան Ա/Ձ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2,	Արարատի մարզ, գ. Ուստա, Թեհլերյան 14
ՀՎՀՀ 02698732 (ԿԳՄՄՆ)	«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արտաշատ մ/ճ
ՀՎՀՀ 00005982 (ԲՈԿ)	Հ/Հ 2051532055341001
ՀՎՀՀ 02698732 (ԼԿ)	ՀՎՀՀ 84485538
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	
Հ/Հ 900011018562 (ԿԳՄՄՆ)	
Հ/Հ 900011024263 (ԲՈԿ)	
Հ/Հ 900011022630 (ԼԿ)	
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	
---------- Վ. Գասպարյան	---------- Գ. Այվազյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 24 » մարտ 2020 թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/24 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության									
Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	2020 թ. պետական բյուջեի ծրագիր	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	Մատուցման	
								Հասցեն	Ժամկետը
1	50311120/1	09.08.01 «1130 11001 Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ»	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ-1	Նախատեսվում է ըստ անհրաժեշտության տպիչ և պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայությունների մատուցում՝ համաձայն կից ներկայացվող, ըստ՝ մակնիշների, մատուցվող ծառայությունների տեսակի: Ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի հայտի հիման վրա՝ առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ Պատվիրատուի նշված հասցեում, իսկ սարքի տեղափոխման անհրաժեշտության դեպքում՝ սարքը տրամադրելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Փոխարինվող պահեստամասերը և լիցքավորման տոները տրամադրվում է Կատարողի կողմից: Անհրաժեշտության դեպքում սարքերի երկկողմանի տեղափոխումն իրականացվում է Կատարողի կողմից՝ իր միջոցների հաշվին: Վերանորոգման ժամանակ օգտագործվող պահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Լիցքավորվող տոների քանակը պետք է ապահովի սարքը արտադրող ընկերության կողմից ներկայացված տպաքանակի չափը ±10%: Կատարողի մոտ պահեստամասի բացակայության պատճառով, ծառայության մատուցման ժամկետն ավելացնելու դեպքում, Պատվիրատուի համաձայնությամբ, կարող է սահմանվել ծառայության մատուցման այլ ժամկետ, անհրաժեշտության դեպքում Կատարողի կողմից Պատվիրատուին ժամանակավոր օգտագործման աշխատող այլ համանուն սարքեր տրամադրելու պայմանով:	դրամ	2392000	1	ք. Երևան, Կազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2	Ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում, մինչև՝ 2020 թվականի դեկտեմբերի 25 -ը

2	50311120/1	09.08.01 «1192 11004 Գիտական որակավորման պարբերական գործընթացի համակարգում և մոնիտորինգ»	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ-2	Նախատեսվում է ըստ անհրաժեշտության տպիչ և պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայությունների մատուցում՝ համաձայն կից ներկայացվող, ըստ՝ մակնիշների, մատուցվող ծառայությունների տեսակի: Ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի հայտի հիման վրա՝ առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ Պատվիրատուի նշված հասցեում, իսկ սարքի տեղափոխման անհրաժեշտության դեպքում՝ սարքը տրամադրելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Փոխարինվող պահեստամասերը և լիցքավորման տոները տրամադրվում է Կատարողի կողմից: Անհրաժեշտության դեպքում սարքերի երկկողմանի տեղափոխումն իրականացվում է Կատարողի կողմից՝ իր միջոցների հաշվին: Վերանորոգման ժամանակ օգտագործվող պահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Լիցքավորվող տոների քանակը պետք է ապահովի սարքը արտադրող ընկերության կողմից ներկայացված տպաքանակի չափը ±10%: Կատարողի մոտ պահեստամասի բացակայության պատճառով, ծառայության մատուցման ժամկետն ավելացնելու դեպքում, Պատվիրատուի համաձայնությամբ, կարող է սահմանվել ծառայության մատուցման այլ ժամկետ, անհրաժեշտության դեպքում Կատարողի կողմից Պատվիրատուին ժամանակավոր օգտագործման աշխատող այլ համանուն սարքեր տրամադրելու պայմանով:	դրամ	72700	1	ք. Երևան, Կիևյան 16, 3-րդ հարկ, Բարձրագույն որակավորման կոմիտե	Ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում, մինչև՝ 2020 թվականի դեկտեմբերի 25 -ը

3	50311120/1	09.08.01 «1130 11002 Լեզվի բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման ծառայություններ»	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ-3	Նախատեսվում է ըստ անհրաժեշտության տպիչ և պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայությունների մատուցում՝ համաձայն կից ներկայացվող, ըստ՝ մակնիշների, մատուցվող ծառայությունների տեսակի: Ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի հայտի հիման վրա՝ առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ Պատվիրատուի նշված հասցեում, իսկ սարքի տեղափոխման անհրաժեշտության դեպքում՝ սարքը տրամադրելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Փոխարինվող պահեստամասերը և լիցքավորման տոները տրամադրվում է Կատարողի կողմից: Անհրաժեշտության դեպքում սարքերի երկկողմանի տեղափոխումն իրականացվում է Կատարողի կողմից՝ իր միջոցների հաշվին: Վերանորոգման ժամանակ օգտագործվող պահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Լիցքավորվող տոների քանակը պետք է ապահովի սարքը արտադրող ընկերության կողմից ներկայացված տպաքանակի չափը ±10%: Կատարողի մոտ պահեստամասի բացակայության պատճառով, ծառայության մատուցման ժամկետն ավելացնելու դեպքում, Պատվիրատուի համաձայնությամբ, կարող է սահմանվել ծառայության մատուցման այլ ժամկետ, անհրաժեշտության դեպքում Կատարողի կողմից Պատվիրատուին ժամանակավոր օգտագործման աշխատող այլ համանուն սարքեր տրամադրելու պայմանով:	դրամ	146000	1	ք. Երևան, Կիևյան 16, 9-րդ հարկ, Լեզվի կոմիտե	Ոչ շուտ քան պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայությունը մատուցել ավելի կարճ ժամկետում, մինչև՝ 2020 թվականի դեկտեմբերի 25 -ը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Գ. Այվազյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԹԱՐԱՅԱՑՆԱԼ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ՍՏԱՏԻՍՏԻԿԱԿԱՆ ՄԻԱՎԵՏԱԿՈՒՅՑ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐ (1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար)*

Յուրաքանչյուր տեսակի տպիչ և պատճենահանող սարքերի մակնիշները (տեսակները)

Ծառայություններ տեսակները և առավելագույն միավոր գները	HP 12A	HP 15A	HP LJPRO M 1536 DNF MEP	HP 35A	HP 49A	Canon 325	Canon 712	Canon 715	Canon 725	Canon LPB 6300	HP LJ 1000	HP LJ 1005	HP LJ 1006	HP LJ 1010	HP LJ 1020	Laser Jet HP 1100	HP LJ Pro 400 MFP	Laser Jet HP 255 (HP83A)	Canon LBP 810	Canon LBP 3000	Canon 3010	Canon 3110	Canon i-Sensys MF3220	MFC Canon MF4010	Canon i-Sessys MF4410	Canon i-Sensys LBP 6300DN	SP 200	SAMSUNG ML 1210	SAMSUNG ML 2010	SAMSUNG 2160	SAMSUNG 4655	Canon iR 2016	Canon iR 2018	Canon iR 2020	KM BIZUB 163/A09A022/	Ընդամենը
1 Բացիկի լիցքավորում, ներառյալ սուտակը	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	3600	4800	5400	5400	5400	3900	4800	4800	4800	9000	23400
2 Տուփերի լիցքավորում, ներառյալ լոմյուսը																																				
3 Թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	5400	5400	5400	5400	5400	15000	15000	15000	21000	178800
4 Հաղթելցնող մաքրում նստած փոխարինում, ներառյալ նյութերը	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	5400	5400	5400	5400	5400	15000	15000	15000	21000	178800
5 Հարուցիչի փոխարինում, ներառյալ հոլմսը	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	3300	5400	5400	5400	5400	5400	15000	15000	15000	21000	178800
6 Մաքրիչակի մաքրիչակը, ներառյալ փոխարինում, ներառյալ մաքրիչակը	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800	6000	6000	6000	6000	6000	18000	18000	18000	30000	238800

Էջ դրամ 77

Ընդամենը առավելագույն միավոր գների հանրագումարը		912600
Ընտրված մասնակցի առաջարկած միավոր գների հանրագումարային գինը		438048

* Մգեցված վանդակները ծառայության տեսակ չեն համարվում

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝
ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.
ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած միավոր գների հանրագումարային գինն է.
ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.
Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Գ. Այվազյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«24» 03 2020 թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/24 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության																		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	2020 թ. պետական բյուջեի ծրագիր	Ծրագրի հաշվահամար և ՀՎՀՀ	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ 2020թ պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում*													
					հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120/1	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ-1	09.08.01 «1130 11001 Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ»	ՀՀ 900011018562, ՀՎՀՀ 02698732				578800	578800	578800	773500	968200	1162900	1572600	1982300	2392000	2392000
2	50311120/1	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ-2	09.08.01 «1192 11004 Գիտական որակավորման պարբերական գործընթացի համակարգում և մոնիտորինգ»	ՀՀ 900011024263, ՀՎՀՀ 00005982				25400	25400	25400	31400	37400	43400	53100	62800	72700	72700
3	50311120/1	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ-3	09.08.01 «1130 11002 Լեզվի բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման ծառայություններ»	ՀՀ 900011022630, ՀՎՀՀ 02698732				51100	51100	51100	63100	75100	87100	106700	126300	146000	146000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Գ. Այվազյան
(ստորագրություն)
Կ.Տ